

ODE TO ARMENIA

Words, © Copyright Babken Araratyan, 2009

Music, © Copyright Keith Hearne, 2009

(Baritone:)

Հայկյան նետի ծայրով գրվեց անունը քո,
Մեծ Տիգրանը իր նիզակով գծեց սահման,
Քաջ նախնիքդ դարձրին դրախտ եղեմյան
Ու կոչեցին քեզ Մայր Հայաստան:
Մեր երազանքն էս, նոր ապագան,
Մենք միշտ խրոխտ ենք եղել, դու մեր արեւ:

(Alto:)

Քայլիր առաջ, հզոր, անպարտ Հայաստան
Վահագնածին քո քաջերով առնական.
Մեջքիդ ունես Մասիս ու Արագած
Քեզ հավերժող հույսի սուրբ վկան:
Երկիր Նոյան, դու վեհ էս եւ կաս.
Քեզնից ենք թեւ առնում ու խոյանում վեր:

(Both:)

Իմ սիգապանձ, արեւաշող Հայաստան
Ապրած եւ՛ փառք, եւ՛ տառապանք անհամար
Առաջ գնա, թող անցնեն վատ օրեր,
Վստահ եղիր, կգան լավ օրեր:
